ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2022թ. հոկտեմբերի երրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հոկտեմբերի 22-23-ին և 29-ին շրջանների զգալի մասում դիտվել են թույլ տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ստեփանակերտում և Ասկերանում՝ 5մմ, Մարտակերտում՝ 3մմ, Մարտունիում՝ 2մմ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +11.6^{0}C, նորմայից բարձր 1.6 ^{0}C-ով, Ասկերանում՝ +12.3^{0}C, Մարտունիում՝ +13.4^{0}C նորմայից բարձր 1.5^{0}C-ով, Մարտակերտում՝ +15.1^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հոկտեմբերի 27-ին և 31-ին՝ +20...+25^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հոկտեմբերի 30-ին՝ +5... +6^{0}C:

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 1-2 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 7-13 մ/վրկ արագությամբ:

Հոկտեմբերի երրորդ տասնօրյակում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 70-73 %:

ԱՀ-ում 2022թ. հոկտեմբեր ամսում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հոկտեմբեր ամսում դիտվել է քիչ տեղումներով, նորմայից բարձր ջերմաստիճանով եղանակ:

Տեղումների ամսվա գումարային քանակը կազմել է Ստեփանակերտում՝ 13մմ, նորմայի 27%, Ասկերանում՝ 11մմ, նորմայի 22%, Մարտունիում՝ 14 մմ, նորմայի 23%, Մարտակերտում՝ 8մմ, նորմայի 14%, կամ Ստեփանակերտում 43մմ-ով, Մարտունիում 32 մմ-ով , Մարտակերտում 24 մմ-ով և Ասկերանում 1մմ-ով քիչ, քան 2021թ-ին:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը կազմել է Ստեփանակերտում՝ +14.4^{0}C, որը բարձր է նորմայից 2.6^{0}C-ով, Ասկերանում՝ +15.4^{0}C, նորմայից բարձր՝ 2.0^{0}C-ով, Մարտունիում՝ +16.2^{0}C, նորմայից բարձր՝ 2.9^{0}C-ով, Մարտակերտում՝ +15.4^{0}C, նորմայից բարձր՝ 3.5^{0}C-ով, կամ 3-4^{0}C–ով բարձր քան 2021թ-ին:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը հանրապետության տարածքում դիտվել է հոկտեմբերի 1-ին նախալեռնային շրջաններում՝ +27^{0}C, հովտային շրջաններում՝ +28... +31^{0}C :

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է սեպտեմբերի 30-ին՝ +5...+6 ^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև +4... +6^{0}C, առավելագույնը բարձրացել է մինչև՝ +37....+44^{0}C:

Հոկտեմբեր ամսվա քամու միջին արագությունը կազմել է 1-3մ/վրկ, առանձին օրեր դիտվել է քամու ուժգնացում պոռթկումները մինչև՝ 9-13 մ/վրկ արագությամբ:

Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտունիում հոկտեմբեր ամսում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 72-75%, նորման Ստեփանակերտում՝ 75%: